ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35-Ա

21 նոյեմբերի 2025թ.
ք. Էջմիածին

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2025 թվականի նոյեմբերի 16-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2025 թվականի նոյեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքում տեղի են ունեցել համայնքի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար կազմավորվել է թվով 47 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 47 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 47 տեղամասային ընտրական հանձնաժողով:

Թվով 47 տեղամասերից 12 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 14/3, 14/6, 14/7, 14/9, 14/11, 14/16, 14/18, 14/19, 14/24, 14/32, 14/39, 14/42, 14/44, 14/45: Թիվ 14/40 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանում գրառումների համար նախատեսված բաժնում սխալմամբ լրացվել են քվեարկության օրը քվեարկության սենյակում գտնվող վստահված անձանց և դիտորդների տվյալները:

Մյուս տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են հետևյալ գրառումները՝

- տեղամաս 14/1

1) «Ինֆոքոմ»-ի լրագրող Խաչատրյան Սուսաննա – լրագրողը իր մոտ ֆիքսել է Սիրարփի Սահակյան օգնել է ընտրողին:

2) «Ինֆոքոմ»-ի լրագրող Խաչատրյան Սուսաննա – լրագրողը ֆիքսել է իր մոտ երկու հոգու իրար հետ մի խցում:

3) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինք – Ընտրատեղամասի դիմաց շատ հաճախ նկարվում են մարդկանց կուտակումներ: Ու թե հանձնաժողովի նախագահ առավոտյան

զգուշացրել էր ոստիկաններին որպեսզի թույլ չտան մարդկանց կուտակումներ սակայն այս ամեն տեղի է ունենում նրանց աչքի առաջ և ոստիկանները ցուցաբերում են հանցավոր անգործություն:

4) «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Ժաննա Արշակյան – Վստահված անձի կարծիքով տեղի է ունեցել ուղղորդման դեպք, կից ներկայացված է արձանագրություն:

- տեղամաս 14/2

5) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Ղազարյան Սևադա – Հանձն. նախագահը մոռացել էր կապարակնքել քվեատուփը, բայց ինքակպչուն ժապավենով քվեատուփը փակված էր: Զգուշացնելուց անմիջապես հետո քվեատուփը կապարակնքվեց:

«Տեղական դիտորդ» Ղազարյան Տաթևիկ – Հաստատում ենք կապարակնքումը իրականացվել է 08:18:

6) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Զավեն Մանուկյան – Լսողական խնդիր ունեցող անձի ազգականն օգնել է քվեախցում ընտրություն կատարեն:

7) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Բդոյան Անահիտ – Տեղամասի տարածքում գտնվել է ոչ լիազորված անձ և ոստիկանը ցուցաբերել է հանցավոր անգործություն:

Հանձնաժողովի նախագահ Կարապետյան Յուրյանա – Հանձնաժողովի նախագահը մոտեցել է, տեղում կատարել է ճշտումներ և խնդրել, որ հեռանա:

8) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ – Քաղաքացին քվեարկության խցում քվեարկություն կատարելուց հետո պատահաբար քվեարկության կտրոնը թողել է քվեարկության ծրարի մեջ:

- տեղամաս 14/4

9) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Նուբար Դանիելյան – Ընտրողը, ով թեկնածու է անձամբ նկարահանում էր իր ընտրության լրիվ պրոցեսը, որ խախտում էր: Նաև հուշում էր ձեռքով, նաև քվեախցիկում գտնվող մարդկանց: Անձը «Հանրապետություն» կուսակցությունից է:

10) «Հանրապետություն» կուսակցության վստահված անձ Անի Խաչատրյանը եկավ ընտրատեղամաս և պահանջեց որ վստահված անձ Արթուր Հարությունյան չօգնի նախագահին խցիկը չդատարկի, խցիկից այն կողմ չանցնի:

11) «Tribut.am» - Ընտրողն այնպես էր դրել քվեաթերթիկը, որ չէր երևում, խնդրել ենք ուղղի, բայց նա բացեբաց տեղավորել է քվեաթերթիկը ծրարի մեջ:

12) Մատյանի մեջ արձանագրությունների թիվ 736+1 լրացուցիչ ցուցակ, իսկ կտրոնների և սարքերի տպագրված թիվը 738:

- տեղամաս 14/5

13) «Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդ Տաթևիկ Արամի Ղազարյան – Քվեատուփի մի կողմի կապարակնիքը պոկված էր, նախագահին զգուշացնելուց հետո կպցվեց և լրացուցիչ ավելացվեց սոսնձվող թուղթը: Տեղամասում բացակայում են ցուցակ 1, ցուցակ 2, քվեաթերթիկ 1, քվեաթերթիկ 2 ցուցանակները:

14) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ *դիտորդ* Նարեկ Արթուրի Սեյրանյան – Արագածի զանգվածի 8/13 հասցեում կան 5 գրանցված, որոնցից մեկը մահացել է 2021թ.-ին, երկուսն էլ ՀՀ քաղաքացիներ չեն:

- տեղամաս 14/8

15) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Սևադա Ղազարյան – Ընտրողներից մեկը մեկ այլ տարեց ընտրողի քվեախցիկի մոտ (կողքին) օգնեց քվեաթերթիկը տեղավորել ծրարի մեջ: Թեև հանձնաժողովի նախագահին հորդորեցի գրանցել օգնողին գրանցամատյանում, սակայն քաղաքացին առանց օգնողների ցուցակում գրանցվելու, հեռացավ ընտրատեղամասից:

16) «Հաղթանակ» դաշինքի վստահված անձ Նարեկ Ավետիսյան – Ընտրատեղամասի հետևի դռան պլոմբը բացակայում է և բանալին, որը դուռը բացում է, թողնված է դռան վրա:

- տեղամաս 14/10

17) «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության վստահված անձ – Նշում էր կատարում իր մոտ, ով էր ներկայանում ընտրությանը:

18) Ընտրող – Ընտրողը կարգը չիմանալով ամուսնուն օգնել է:

Հանձնաժողովի նախագահ - խախտումը անմիջապես ուղղվել է և քաղաքացուն գրանցել ենք:

19) Մանուկյան Իլյուշան «Tribut.am» օպերատորը լինելով հավատարմագրված (ըստ հեռախոսի մեջի էլ. նկարի) չէր կրում բեյջը տեսանելի պաճառաբանելով, որ այն թողել է մեկ այլ տեղամասում:

20) «Հայրենիք» կուսակցություն վստահված անձ Նարինե Վարդանյան – Գովազդային պաստառ է փակցված տեղամասի մոտ: Արգիշտի Մեխակյանի և Ժառանգություն կուսակցության:

21) «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան հիմնադրամ» - Կատարվել է ծեր ծնողի կատարած ընտրության դեպքում թղթերի ուղղում և սխալ խախտման արձանագրում:

22) «Հայրենիք» կուսակցություն վստահված անձ Նարինե Վարդանյան – Ցուցակ 1-ում տեղի է ունեցել շփոփմունք, քաղաքացու փոխարեն ստորագրել է 1 այլ ընտրող:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» դիտորդ Տաթևիկ Արամի Ղազարյան - «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» դիտորդ Տաթևիկ Ղազարյանը արձանագրում է, որ 15:20-ին քվեարկողի ստորագրության բաժնում այլ ընտրողի ստորագրություն կար:

23) «Հայրենիք» կուսակցություն վստահված անձ Նարինե Վարդանյան – Կտրոնը առանց կնքվել է:

- տեղամաս 14/12

24) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Գոռ Վաչագանի Ալեքսանյան – Ընտրողը մինչև քվեախցիկ մտնելը բարձրաձայն նշեց նախնտրելի թեկնածու անունը:

25) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Նորայր Սամվելի Ալեքյան – «Ազատ» Դեմոկրատներ կուսակցության 2 վստահված անձի համատեղ ներկայություն. Շրջիկ վստահված անձ: Այլ նշումներ – մոռացել է գրանցի ելքի ժամը:

26) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Գոռ Վաչագանի Ալեքսանյան – Ընտրողի կողմից տեսանկարահանվել է քվեախցիկում քվեաթերթիկի ընտրելու պրոցեսը:

- տեղամաս 14/13

27) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Արամ Հակոբյան – 14/13 ընտրատեղամասում 09:15-ին քաղաքացին չկարողացավ կատարել իր քաղաքացիական պարտքը – Կիրակոսյան Արտաշես՝ Մաշտոց հ 22/42: Կար ցուցակում, սակայն սարքը չճանաչեց տվյալ քաղաքացու ԱՅԴ-ի քարտը, որը ժամկետի մեջ էր և վնասված չէր:

28) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Արամ Հակոբյան – 14/13 ընտրատեղամաս, Կարճիկյան 1 փկ 2. 7 տուն բնակիչը ՀՃԿ վստահված անձին ահազանգեց, որ իր հասցեում գրանցված Վարդիթեր Առաքելյանը կապ չունի իր հասցեի հետ, ավելին՝ մահացած է:

29) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Արամ Հակոբյան – 14/13 տեղամաս, Մաշտոցի Մաշտոցի 22/44 բնակիչը իր տան հասցեի վրա գտավ անծանոթ ընտրողի՝ Մալինցյան Հովհաննեսին:

30) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հաղթանակ» դաշինքի վստահված անձ Արամ Հակոբյան – Մաշտոց 30. բն. 4 հասցեում գրանցված Գրիգորյան Շողիկը ծնվել և ապրում է Մոսկվայում, որևէ կապ չունի նշված հասցեի հետ: Ահազանգեց հասցեի բնակիչ Արաքսյա Գրիգորյանը:

31) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Արամ Հակոբյան – Վաղարշապատի մանկավարժ ներկայացած տիկինը ամուսինների էր մտցրել ընտրատեղամաս և նրանց հուշում էր՝ Արգիշտի Արգիշտի անունը: Երբ մոտեցա, հարցնելու, թե ինչու է ուղղորդում փախավ: Ճշտեցի, որ տիկինը 14/13 տեղամաս չէր եկել ընտրելու:

32) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռուզաննա Ստեփանյան և «Հայրենիք» կուսակցություն վստահված անձ Արուսյակ Մկրտչյան – Երկու երիտասարդ երկրորդ անգամ տարբեր ընտրողների ուղղորդել են ընտրատեղամաս կա տեսանյութ, թե Մուսալեռից ներկայացած տղան ու մյուսը ճողոպրում են:

33) «Հայրենիք» կուսակցություն վստահված անձ Արուսյակ Մկրտչյան – Մարդիկ եկել են ընտանիքով ընտրության ցուցակների մեջ տղայի անունը բացակայում է:

- տեղամաս 14/14

34) «Հայրենիք» կուսակցություն – 3 հոգի գտնվում է տեղամասում վստավիած անձերից:

35) «Համահայկական Ճակատ» կուսակցություն – Քվեախցիկից դուրս կատարեց քվեարկությունը: - Խախտումը ուղղվել է նույն պահին:

36) «Համահայկական Ճակատ» կուսակցություն – Քվեաթերթիկների անհավասարություն: - Քվեաթերթիկների անհավասարությունը պայմանավորված է նախորդ օրը դասավորելով մեկը մյուսից մի քանի տարբերությունով:

37) «Համահայկական Ճակատ» կուսակցություն – Վստահված անձը նկատել է, որ քաղաքացին դրսում է կատարել իր ընտրություն:

38) «Հանրապետություն» կուսակցություն – Անվավեր չի ճանաչվել դրոշմանիշը փակցվել է և գցել քվեատուփ, և քվեարկությունը կատարվել է քվեախցից դուրս: - Հանձնաժողովի անդամները նկատել են որ քաղաքացին իր ընտրությունը կատարել է քվեախցիկում:

«Հայաքվե» դիտորդական կազմակերպություն, «Մայր Հայաստան» կուսակցություն, «Հայրենիք» կուսակցություն, «Հաղթանակ» դաշինք, «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ – Կուսակցությունների վստահված անձիք և դիտորդները պնդում են, որ խախտման էությունը այն է, որ դրոշմանիշը փակցված է զգուշացնելուց հետո: Ընտրողը զրկվել է ընտրելու իրավուքից, ընտրողի մեղավորությունը չկա:

- տեղամաս 14/15

39) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Շուշան Ավետիսյան - Քաղաքացին բացահայտ ցույց տվեց յոթ համար քվեաթերթիկը տեղադրելով ծրար, խախտումը նկատվել և արձանագրվել է դիտորդի կողմից ժ. 10:45:

40) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Շուշան Ավետիսյան - Քաղաքացին ոչ բացահայտ յոթ համարի քվեաթերթիկը դուրս եկավ քվեախցից նոր տեղադրեց – խախտումը նկատվել և արձանագրվել է դիտորդի կողմից ժ. 12:10:

41) Քաղաքացին իր ընտրութունից հետո մոտեցավ կողքի քվեախցիկ պատառաբանելով օգնում է հարևանին - խախտումը նկատելի արձանագրեց վստահված անձը ժ. 14:16:

42) Քաղաքացին առաջին համարը ձեռքին առանց ծրարի դուրս եկավ քվեախցիկից - խախտումը նկատելի է և արձանագրվել է դիտորդի կողմից ժ. 14:51:

43) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Շուշան Ավետիսյան – սարքի հետ առաջացավ խնդիր, կապվեցին կենտրոնի հետ կարգավորվեց – նկատեց դիտորդը ժ. 15:40:

44) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Շուշան Ավետիսյան – ՈՒղղորդում հարևան խցիկից դեպի յոթ համար - նկատեց դիտորդը և արձանագրեց ժ. 16:55:

45) «Մայր Հայաստան» վստահված անձ Հասմիկ Սարգսյան - Գրանցամատյաններում 2 թվի անհամապատասխանություն նկատվեց – նկատվել է խախտում արձանագրվել «Մայր Հայաստան» վստահված անձի կողմից ժ. 20:40:

- տեղամաս 14/17

46) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդներ Անահիտ Հովհակիմյան և Սիրանուշ Եղիազարյան – ՔՊ կուսակցության վստահված անձի կողմից փոխանցվել է հեռախոսը հանձնաժողովի նախագահին, ով խոսել է: Հարցին թե ինչ բովանդակությամբ՝ չի նշել: *Այլ նշումներ* – զանգը եղել է 17:25-17:35 ժամանակահատվածում:

47) «Հայաքվե» դիտորդական կազմակերպություն դիտորդ Կառլեն Արտավազդի Հակոբյան – Քաղաքացին դժգոհում էր տեղեկացվածությունից ընտրության կարգի վերաբերյալ, որին ի պատասխան հանձնաժողովի անդամը արձագանքեց խնձորներով բացատրեի:

- տեղամաս 14/20

48) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդներ Անահիտ Հովհակիմյան և Սիրանուշ Եղիազարյան – Ընտրողի կողմից ընտրատեղամասում իրականացվեց քարոզչություն, որին հակադարձեց հանձնաժողովի նախագահը:

49) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդներ Անահիտ Հովհակիմյան և Սիրանուշ Եղիազարյան - «Հայրենիք» կուսակցություն վստահված անձի կողմից եղել է ռիսկ ուղղորդման, որը կանխվել է նախագահի կողմից:

50) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» դիտորդ Արթուր Միքայելյան – Ես նկատեցի, որ ընտրողներից մեկը, մեկ օգնում էր տարեցներին ուղղորդեց, որից հետո դիմեցի հանձնաժողովի նախագահին արձանագրություն կազմելու համար(սա ընդունեք որպես արձանագրություն), որից հետո տեղամաս մտավ տիկին Անի Խաչատրյանը ով անհիմն սկսեց մեղադրել հանձնաժողովի նախագահին անձին ուղղորդելու համար, այս դեպքի ականատես եղել եմ ես և հանձնաժողովի նախագահի կողմից ոչ մի ուղղորդում չի եղել:

51) «Ազատ Դեմոկրատներ» կուսակցության վստահված անձ Ֆրունզե Սահակյան – Վստահված անձը նկատեց, որ քվեարկողը մի քանի անգամ քվեաթերթիկներով մտավ խցիկ և մոտեցավ հանձնաժողովի անդամին, որ իրեն ուղղորդի ընտրաքայլերի մասին, որի պատճառով նախագահը անվավեր համարեց տվյալ քվեարկողի քվեաթերթիկը պատռեց: Տրամադրվել է նոր քվեաթերթիկները (1-8) համարի:

- տեղամաս 14/21

52) «Ժառանգություն» կուսակցություն վստահված անձ Վարդանուշ Կիրակոսյան – Ընտրող՝ Լևոն Ալեքսանյանը խախտել է ընտրելու իրավունքը նկարելով ընտրական քվեաթերթիկ:

- տեղամաս 14/22

53) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Նորայր Սամվելի Ալեքյան – Ըստ գրանցամատյանի տվյալների «Հաղթանակ» դաշինքից միաժամանակ երկու վստահված անձ է ներկա եղել:

- տեղամաս 14/23

54) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Քնարիկ Ռաֆիկի Մաթևոսյան - «Հայրենիք» կուսակցություն վստահված անձը նստել է քվեատուփի առաջ և օգնելով բացել է արկղի անցքը ժ. 14:30:

55) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Լիլիթ Սերյոժայի Հովակիմյան – Ք. Էջմիածին Պատկանյան փ. 43շ. 18 բն. սեփականատեր Կամո Գևորգյանի պնդմամբ կան անծանոթ հին գրանցված անձինք:

56) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդներ Անահիտ Հովհակիմյան և Սիրանուշ Եղիազարյան – Նկարվել է ՔՊ կուսակցության վստահված անձի կողմից ընտրողների հետ զրույցի դեպքեր մինչև նրանց ընտրելը և հետո, որը կարող է

ունենալ ռիսկ ուղղորդման: Տեղեկացվել է նախագահին, ով անմիջապես արձագանքեց և համապատասխան գործողություններ իրականացրեց՝ զրույցի միջոցով: Այլ նշումներ – Իրավիճակն արձանագրվել է 19:10 – 19:46 հատվածում:

- տեղամաս 14/26

57) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն»-ի դիտորդ Գառնիկ Մկրտչի Դավթյան – Ընտրողներից մեկը ուղղորդում էր մյուսին առանց համապատասխան արձանագրման: Իմ դիտողությունից հետո տվյալ դեպքը կանխվեց 12:40:

58) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն»-ի դիտորդ Գառնիկ Մկրտչի Դավթյան – Ընտրողներից մեկը ուղղորդեց մյուսին՝ «լսվել» լսել եմ թիվը: Իմ դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը դիտողություն արեց քվեարկողին 15:20:

- տեղամաս 14/27

59) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն»-ի դիտորդ Արմեն Աբովյան – Ընտրողը առանց քվեաթերթիկների մտել է քվեախցիկ:

60) «Հայաքվե» դիտորդական կազմակերպություն դիտորդ Աստղիկ Տիգրանյան – Ընտրողը, որ հիվանդ էր տեսանելի էր քվեարկում, ես տեսել եմ թիվ 3 քվեաթերթիկը: Օգնող քույրը, ըստ օրենքի թույլտվության մոտեցել էր ընտրողին, հայտարարեց, որ ճիշտ է քվեարկել: Հայտարարությունից առաջ, քույրը երկու ավել քվեաթերթիկ հանեց, թողեց իր նախընտրած թերթիկը ու հայտարարեց:

61) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Աստղիկ Տիգրանյան – Ընտրողը ստորագրել է ուրիշի տեղը, բայց անհատական կնիք չի դրվել դիմացը: Նախագահը տեղեկացված է:

62) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Աստղիկ Տիգրանյան – Ժամը 17:46-ին ընտրող՝ Համբարձում Համբարձումյանը, բաց քվեարկել է:

- տեղամաս 14/28

63) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Անահիտ Վարդանի Պատատյան – Ընտրողը բարեկամի հետ II անգամ մտնում է ընտրատեղամաս, իմ դիտողությունից հետո բարեկամին դուրս քաշեց սենյակից և հեռացան տեղամասից:

64) Հանձնաժողովի քարտուղար Արմենուհի Հակոբյան – Ինձ՝ Արմենուհի Հակոբյանիս եղել է զանգ, որը ես զբաղված լինելու պատճառով փոխանցել եմ ՔՊ վստահված անձին, ինչը «Հայաքվե» դիտորդի կողմից այլ ձևով է ընկալվել:

- տեղամաս 14/29

65) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Օստակարյան Ռոզեթ Սարգիսի – Անձնագիրը դուրս է թողնված քվեաթերթիկները խցկել էր գրպանում, որից հետո կանխվել է:

66) «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության վստահված անձ – Մուրադյան Սվետլանա Սերգեյի – Վստահված անձը դրսում մուտքի մոտ թիրախավորելով Արգիշտի Մեխակյանին:

67) «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձ Սոննա Սուրենի Աղեկյան – Ընտրողը քվեասենյակում հովհանավորում էր մյուս ընտրողներին և կոչեր հնչեցնում: - Որը չի կանխվել:

68) «Հայաքվե» դիտորդական կազմակերպություն դիտորդ – Արտակ Վարուժանի Մկրտչյան – Օգնողը առանց գրանցվելու օգնել է ընտրողին: - Որը կանխվել է:

69) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Արբակ Արմենի Սարգսյան – Քվեատուփը փակված էր միայն սոսնձվող կնիքով, կապիչներ առկա չէին: Խնդիրը ներկայացվել է նաև հանձնաժողովի նախագահին, պարզաբանել է, որ ընտրական օրենսգիրքը չի պարտավորեցնում:

70) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ – Արտակ Վարուժանի Մկրտչյան – Կատարում էր բաց ընտրություն: - Կանխվել է:

71) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Օստակարյան Ռոզեթ Սարգիսի – Հանձնաժողովի անդամի բացատրությունից հետո քաղաքացին չկարողացավ քվեարկությունը ճիշտ կատարել: Որից հետո օգնող բերեցին: Կորցրել էր կտրոնը որը գտնվեց: Որից հետո հրավիրվեց պատական օգնող: Քաղաքացին կարողացավ քվեարկել և դուրս գալ: - 15:25 շտկվել է:

72) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինք դիտորդ Արբակ Արմենի Սարգսյան – Ես արձանագրում եմ, որ քվեատուփի վրա առկա չէ հատուկ կապիչներով փականը: Ես մտածում եմ, որ դա դիտավորություն չէ հանձնաժողովի կողմից քանի որ դրա մասին տեղեկացրել են իրենց ասելով: Հատուկ կապիճով չկնքելու պարտավորվացություն չունենալու մասին իրանց վստահեցրել է մեկ այլ առաքելության դիտորդ: Խախտումը վերացվել է: - Շտկվել է:

73) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ – Մուրադյան Սվետլանա Սերգեյի – «Մայր Հայաստան» կուսակցության ներկայացուցիչը առավոտյան ժամը 08:00-ից ցուցաբերել է դեմոնստրատիվ վարք՝ թույլ տալով ավելորդ ձևակերպումներ ընտրատեղամասում, որը խոչնդոտել է ընտրողների և հանձնաժողովի անդամների աշխատանքին:

74) «Հայրենիք» կուսակցության վստահված անձ Սառա Գրիգոր Խաչատրյան – Ընտրողը մոտեցավ քվեախցիկ ուղղորդելով մյուս ընտրողին: - Որը կանխվեց:

- տեղամաս 14/30

75) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Սիրվարդ Սերյոժայի Համբարյան – Քվեարկության խցիկից ընտրողը խնդրեց իր թեկնածուին (անունը բարձրաձայբեց) օգնել գրանցելու: Խնդիր ուներ: Օրինական գրանցված ընտրողին կցեցին:

76) Հանձնաժողովի անդամ Աբելյան Ջեմմա – Ընտրողի կողմից տեղեկացվել է հանձնաժ, որ խցիկում գրիչ կա, որը դուրս է եկել կողից:

- տեղամաս 14/31

77) Հանձնաժողովի անդամ Էլեն Կուղյանոսյան - (տեղեկացրեց նախագահին) ինքնասոսնձվող դրոշմանիշը անզգուշաբար փաքցվել է ծրարի վրա:

- տեղամաս 14/33

78) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Արբակ Արեմնի Սարգսյան – Ընտրողը ժամը 11:45-ի մոտակայքում, մոտեցել է տեխնիկական սարքի կտրոն է ստացել որպես մասնակից ստացել է կտրոնները, ստորագրել է, պահանջել էր հանձնաժողովից գրիչ, հանձնաժողովը բացատրելով կարգը սեղանից վերցնելով գրիչը փորցեց թիվ 1 քվեաթերթիկի վրա նշումներ կատարել, հանձնաժողովի կողմից ստացավ հարց, որ չի կարող որևէ նշում կատարել դրանում, որից հետո բարկացած դուրս եկավ քվեասենյակից իր հետ տանելով քվեաթերթիկները և կտրոնը: Կտրոնը ճմռթեց ձեռքի մեջ: «Հայաքվե» դիտորդական կազմակերպություն Սիրանուշ Հայկազի Մարտիրոսյան – Վերոնշյալ տեքստը հաստատում եմ, քանի որ ինքս էլ ականատես եմ եղել իրավիճակին: «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ դիտորդ Թամարա Հենրիկի Սարգսյան – Ես նույնպես ականատես եմ եղել և հաստատում եմ վերոգրյալը:

- տեղամաս 14/34

79) «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Նորիկ Գրիգորի Երանյան – Հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկները հատկացնող հանձնաժողովի անդամին քվեաթերթիկները հատկացնում է կամայական քանակով պատահական ժամերի:

80) «Հաղթանակ» դաշինքի վստահված անձ Նորիկ Գրիգորի Երանյան – Ժամը 13:15 մինչ ընտրողի գրանցումը պարզվել է, որ ընտրողների ցուցակում առկա է ընտրողի ստորագրություն:

81) Ռոմիկ Ազիզի Ջավոյանը հայտարարում է, որ իր մայրը՝ Մուսան Մամոյի Ջավոյանը ընտրական ցուցակում պատահաբար ստորագրել է իր փոխարեն և հանձնաժողովի անդամների միաձայն որոշմամբ թույլատրվել է Ռոմիկ Ջավոյանին ստորագրել մոր փոխարեն:

82) Հանձնաժողովի քարտուղար – Նատալյա Հարությունյան – Իմ կողմից կատարվել է գրառում սխալ տեղում և ԶԼՄ-ի 3 ներկայացուցիչների տվյալները գրվել է վստահված անձանց ցուցակում:

- տեղամաս 14/35

83) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Քոթանջյան Գևորգ Նորայրի – Վստահված անձը հանձնաժողովի փաստացի գործառույթներն է իրականացրել, ընտրության եկած քաղաքացիներին ցուցում տվել ընտրակարգի վերաբերյալ, որը հանձնաժողովի գործառույթն է և հանձնաժողովի իի գործառույթում փաստացի թերացել է:

«Հաղթանակ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Արման Արթուրի Չիթչյան- Ես հերքում եմ, որ ուղղորդել եմ ինչ-որ անձի ընտրություն կատարելու հարցում: Ես ուղղակի անտեղյակ հազարավոր մարդկանց հարցերին եմ պատասխանել սարքին մոտենալու ուղղության հարցում:

84) «Անկախ դիտորդ» Հասարակական դաշինքի դիտորդ Քոթանջյան Գևորգ Նորայրի – ԶԼՄ ներկայացուցիչներ 5-րդ ալիքի լրագրողը և օպերատորը փաստացի տեղամաս են եկել, չունեին թղթային բեյջեր, թեև հավատարմագրված էին: Արձանագրելու փուլում դուրս եկան տեղամասին:

- տեղամաս 14/36

85) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Մարինե Գագիկի Միրզոյան - Քվեասենյակում անմիջապես քվեախցիկների մոտ պատը փակված էր պոլիէթիլենային ծածկով 8:07:

86) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Մարինե Գագիկի Միրզոյան – 15:17-ին Սերգեյ Գրիգորյան քաղաքացու փոխարեն կատարվել էր ընտրություն՝ ստորագրվել էր և կնքվել:

- տեղամաս 14/37

87) «Հաղթանակ» դաշինք վստահված անձ Քամալյան Սարգիս Համլետի – Անձը ընտրություն կատարելուց 2 անգամ մոտենալուց հետո ուղեկցողի դերում է մոտենում – նախագահը հրավիրում է դուրս, շնորհակալություն նախագահին:

88) «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի դիտորդ Սաքունց Արթուր Ալբերտի – «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Ռաշիդ Խալիթովը երկար ժամանակ գտնվել է տեղամասի տարածքում, ոչ քվեարկության սենյակում առանց գրանցվելու:

89) Հանձնաժողովի քարտուղար Արամ Մեսրոպի Մնացականյան – Ժ. 13:58-ին տեղի է ունեցել միջադեպ տեսողական խնդիր ունեցող տարեց կնոջ մասնակցությամբ, որը հանդիսանում էր ընտրող – հանձնաժողովի նախագահը մարեց կնոջ ընտրած ծրարը: Հանձնաժողովի նախագահի բանավոր հարցման արդյունքում պարզվել է, որ տրվել է նոր քվեաթերթիկների փաթեթ և ծրար, և ընտրողին հնարավորություն տրվել կատարել ընտրություն:

- տեղամաս 14/38

90) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Յայլոյան Աննա Մանվելի – Ընտրողը կորցրել է կտրոնը, որին օգնելու պատրվագով նախագահը դատարկել է քվեախցիկը, իսկ ընտրողի ամուսինը բացել ծրարը 10-ից ավելի անձանց մոտ, որպեսզի ստուգի ներսում է թե, ոչ – կուտակումներից խուսափելու համար օգնում էի ընտրողին գտնել կտրոնը, որը չգտնվեց: Ծրարը մարվել է:

91) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն»-ի դիտորդ Հայկ Սարգսի Թամրազյան – 2 ընտրող առանց գրանցվելու օգնության համար, միարժամանակ 2 - ական ծրարով գտնվել են քվեախցում:

92) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Յայլոյան Աննա Մանվելի – ընտրողը մոտեցավ ստորագրության հատվածում իր փոխարեն ստորագրել էր հայրը, ինքն էլ ստորագրեց հոր անվան դիմաց, դրված է նաև կնիքը:

93) Մասնագետ Արման Մովսիսյան – Ընտրողի թիվ 150 կտրոնը տպվել է թերի, կապված սարքի տեխնիկական խնդրի հետ – կտրոնում երևում է համարը, ԱԱ, ժամը, սակայն նկարը չի տպվել:

94) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Յայլոյան Աննա Մանվելի – Ընտրողը սխալ ստորագրության բաժնում նշում է կատարել, հանձնաժողովի անդամի զգուշացումից հետո ստորագրել է ճիշտ հատվածում:

95) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Յայլոյան Աննա Մանվելի – Ընտրողը կատարել է բաց ընտրություն, մոտենալով քվեաթերթիկներին նշել է, թե, որ համարին է ցանկանում ձեռքով ցույց տալով: - ՈՒղորդում էր Արփինե Արշակյան Նոյեմզարին:

96) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն»-ի դիտորդ Արթուր Միքայելյան – Դրսում կան մարդկանց խմբեր մոտ 2-3 յուրաքանչյուրը 5-6 հոգի, ոստիկանության աշխատակցին մոտենալուց հետո, ասում են «եկան» ու ցրվում, որից հետո հարցնում են ինչու են կուտակումները, պատասխանում է քաղաքացին: -Այնուհետև մոտենում են ոստիկանները, որոնք փորձում են ցրել մարդկանց, սակայն դեռևս կան կուտակումներ:

97) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» դիտորդ Արթուր Միքայելյան և «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձ Արշակ Սարգսյան – Civic.am-ի լրագրողները առանց գրանցվելու ընտրական տեղամասի ներսում իրականացրել է գործունեություն, որից հետո գրանցվել է:

- տեղամաս 14/41

98) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Գայանե Մամաջանյան – Ես Գայանե Մամաջանյանս 14/41 ընտրատեղամասում նկատեցի, որ ընտրողը եկել է ռուսական անձնագրով, դրսի ցուցակում անունը կա, բայց տեխնիկական սարքում չկա: Մասնակցել է կացության թղթով: - Խնդիրը լուծված է:

- տեղամաս 14/44

99) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ - Էդգար Մարտիրոսյան Արայիկի «Հայաքվե» դիտորդական կազմակերպություն – 282 որդին Արշակ Հովհաննիսյանը և 283 հայրը Նվեր Հովհաննիսյանը ստորագրել են մեկը մյուսի փոխարեն: Նրանք միարժամանակ չեն գտնվել տեղամասում:

100) Ընտրողը բարձրաձայնեց, թե որ թեկնածուին է քվեարկելու, մեր հորդորից հետո մտավ քվեախցիկ:

101) Ընտրողը դուրս էր եկել ընտրատեղամասից չօգտագործված թղթերը ձեռքին, զգուշացնելուց հետո վերադարձավ և գցեց քվեախցիկ:

102) Զինա Ոսկանյան 864, Նորիկ Ավետիսյան 941, Արամ Բաբայան 111 – հմարվում է վավեր:

- տեղամաս 14/46

103) «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձ – Գրիգոր Իսկանդարյան – Քաղաքացին կատարել է բաց քվեարկություն ժ. 10:25-ի սահմաններում: Քաղքացին պատռել է իր կողմից բաց քվեարկությունը: Հանձնաժողովի նախագահը համարել է անվավեր:

104) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի դիտորդ - «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձի դիտարկման վերաբերյալ կայացրած որոշման հարցում, կարծում եմ, թե կարելի էր թույլատրել նորից քվեարկել:

105) «Համահայկական Ճակատ» կուսակցության վստահված անձ Սլավիկ Մուրադյան – Քաղաքացի Ռոբերտ Հակոբյանը, որը օգնում էր տատիկին, երկրորդ անգամ իր անձնագիրը

ներկայացրել է տեխ. Սարքին, որտեղ ֆիքսվել է կրկնակի քվեարկություն: Նախագահը ներկայացրել է ոստիկանին, ով Ռոբերտ Հակոբյանին հրավիրել է դուրս:

- տեղամաս 14/47

106) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Նանե Ալբերտի Եղիազարյան – Քաղաքացին բաց քվեարկություն է կատարել՝ քվեախցիկից հայտարարելով այն համարը, որը ընտրում է:

107) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Նանե Ալբերտի Եղիազարյան – Քաղաքացին աջ քվեախցիկին մոտենալու համար անցել է ձախ քվեախցիկի հետևով խոսել քվեախցիկում այլ քաղաքացու հետ նոր մոտեցել աջ քվեախցիկին: - Հանձնաժողովի նախագահ Կ. Սարգսյան և հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սարգսյան – թյուրիմացություն է տեղի ունեցել, հաշմանդամություն ունեցող քաղաքացին շփոթելով ձախ քվեախցիկի հետևով է մոտեցել աջ քվեախցիկին:

108) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Նանե Ալբերտի Եղիազարյան – Քաղաքացու կողմից բաց քվեարկություն է տեղի ունեցել:

109) «Հայաքվե» դիտորդական կազմակերպության դիտորդ Նանե Ալբերտի Եղիազարյան – Քաղաքացու կողմից բաց քվեարկություն է կատարվել:

Այլ նշումներ - Հանձնաժողովի քարտուղար Անի Սարգսյան և հանձնաժողովի անդամ Անի Թադևոսյան – Քաղաքացին ստանալով քվեաթերթիկները և ծրարը, մոտենալով քվեախցիկին, տեսնելով, որ ներսում մարդ կա ուսումնասիրում է քվեաթերթիկները:

2. Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

1) «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ՀՀ ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

2) ***Թիվ 1-8, 10, 12, 13, 16, 17, 18, 20, 21, 23, 25, 27, 31, 32, 34, 35, 36, 38, 43-51, 53, 54, 56-60, 63-68, 70, 71, 73-79, 82-85, 87-90, 93, 96, 98, 101-104, 107, 109*** պայմանական համարակալումները կրող գրառումները կամ չեն առնչվում քվեարկության կարգի խախտումների հետ կամ նկարագրում են խախտումների կանխման կամ վերացման հանգամանքներ կամ էլ նկարագրվածից անհասկանալի է, ինչպիսի խախտման մասին է խոսքը:

3) ***Թիվ 14, 28, 29, 30, 33, 55*** պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերվում են ընտրողների ցուցակներում տեղ գտած հնարավոր թերություններին: ՀՀ ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության

ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:»: Նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ «4. Լիազոր մարմինը տարին երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է: Ազգային ժողովի հերթական ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում լիազոր մարմինն ընտրողների ռեգիստրը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր և 7 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում 21 օր և 7 օր առաջ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:

5. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Դիմումը պետք է պարունակի անհրաժեշտ հիմնավորումները, և դրան կից պետք է ներկայացված լինեն փաստական հանգամանքների ապացույցները: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեգիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:»:

ՀՀ ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած, այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին, ներառյալ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումները պետք է ապահովված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 9 օր առաջ սույն օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

2. Քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը, քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրենց ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնելու իրավունք ունեն այն անձինք, որոնք՝

1) հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն դուրս են մնացել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից.

2) սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացրել են համապատասխան ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու

մասին դիմում, դիմումը չի մերժվել, սակայն նրանք չեն ընդգրկվել համապատասխան ցուցակում.

3) հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն քվեարկության օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ չունենալու հիմքով չեն ընդգրկվել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

Ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումների վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը: Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը տրամադրում է տեղեկանք: ...»:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն ենթակետում նշված գրառումներով ներկայացված հանգամանքներում ընտրական իրավունքի խախտումներ, որևէ ընտրողի՝ ընտրելու իրավունքի խախտում կամ սահմանափակում ներկայացված չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձնաժողովը գտնում է, որ սույն ենթակետում նշված գրառումներով ներկայացված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

4) ***Թիվ 9, 11, 15, 24, 26, 37, 39, 40, 41, 42, 52, 62, 95, 100, 106, 108*** պայմանական համարակալումները կրող գրառումները վերաբերվում են քվեարկության գաղտնիության ենթադրյալ խախտմանը: Դիտելով սույն վարչական վարույթի շրջանակներում համացանցային հարթակների և էլեկտրոնային ՀԼՄ-ների նյութերի ուսումնասիրությամբ ձեռքբերված տեսաձայնագրությունը և գնահատելով դրանցում արտացոլված հանգամանքները, ինչպես նաև գրառումներում ներկայացված հանգամանքները՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն ենթակետում թվարկված համարակալումները կրող գրառումների ներքո նեկայացված հանգամանքներում մի դեպքում, ընտրողը, գտնվելով քվեարկության խցիկում, իրեն տրված քվեաթերթիկների փաթեթը և ծրարը տեղադրել է քվեարկության խցիկից դուրս՝ անմիջապես քվեարկութայն խցիկի կողքը՝ սեղանին, և փորձել է քվեաթերթիկների փաթեթից ընտրել որևէ քվեաթերթիկ: Նկատելով այդ դրվագը՝ հանձնաժողովի անդամն ընտրողին ցուցում է տվել քվեարկությունը կատարել գաղտնի, որից հետո ընտրողն իր քվեաթերթիկների փաթեթը և այլ իրերն անմիջապես տեղափոխել է քվեարկության խցիկի ներսի հատված և գաղտնի քվեարկությամբ կատարել իր ընտրությունը: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության գաղտնիության հնարավոր խախտման հնարավորությունը կանխվել է:

Թիվ 9 պայմանական համարակալումը կրող գրառմամբ ներկայացվում են հանգամանքներ, որոնցում նկարագրված է, որ ընտրողն իր քվեարկության գործընթացը նկարահանել է, սակայն ներկայացված չեն ապացույցներ առ այն, որ ընտրողը հրապարակել

կամ բացահայտել է իր կատարած քվեարկությունը, ինչի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված հանգամանքներում քվեարկության գաղտնիության խախտում առկա չէ:

Մյուս դեպքերում նշված է, որ ընտրողները քվեարկության խցիկի ներսից բարձրաձայնել են, թե որ համարի քվեաթերթիկն են ընտրել, սակայն իրականում կատարած քվեարկությունը չեն բացահայտել, ուստիև, քվեարկության գաղտնիության խախտում առկա չէ:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն ենթակետում ներկայացված հանգամանքներում քվեարկության գաղտնիության խախտում առկա չէ:

5) ***Թիվ 22, 61, 80, 81, 86, 92, 94, 99*** պայմանական համարակալումը կրող գրառումը վերաբերում է սխալմամբ այլ անձի փոխարեն ստորագրելու դրվագին:

ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ «Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողն ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին»:

Վերլուծելով ներկայացված փաստական հանգամանքները՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թույլ է տրվել ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ ընտրողների ցուցակում ընտրողի տողը գտնելու և ընտրողի կողմից իր տվյալների դիմաց ստորագրություն դնելու կարգի վերաբերյալ ընթացակարգային նորմի խախտում: Միաժամանակ, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 14/10, 14/27, 14/34, 14/36, 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովների համապատասխան անդամները հնարավորություն են տվել այն ընտրողներին, որոնց տվյալների դիմաց արդեն եղել են ստորագրություններ, ստորագրելու ընտրողների ցուցակում՝ ստորագրության կողքին դնելով իրենց անհատական կնիքը: Որևէ ընտրողի՝ ընտրելու իրավունք չի խախտվել և չի սահմանափակվել: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

6) ***Թիվ 19 և 97*** պայմանական համարակալումները կրող գրառումների համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներն առանց առանց վկայականի, մի դեպքում, և առանց անձը հաստատող փաստաթղթի, մյուս դեպքում, գրանցվել են գրանցամատյանում:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սույն ենթակետում նեկայացված հանգամանքների վերաբերյալ իրազեկվել է Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների քվեարկության օրը՝ 16.11.2025թ.: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նույն պահին կապ է հաստատել թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ և պարզել, որ թիվ 14/10 ընտրական տեղամաս ներկայացած «Tribut.am» ՀԼՄ ներկայացուցիչ Իլյուշա Մանուկյանը ներկայացրել է իր ՀԼՄ ներկայացուցչի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշի վկայականը, սակայն վկայականում պարունակվող արագ արձագանքման ծածկագիրը (QR կոդ) չէր հաջողվում կարդալ՝ հավաստիանալու համար ՀԼՄ ներկայացուցչի հավատարմագրված լինելու մեջ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի ներկայացուցիչները քվեարկության օրը կարող են իրականացնել ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Նույն մասի համաձայն՝ ՀԼՄ-ների ներկայացուցիչներին տրվող վկայականներն ինքնաշխատ կերպով գեներացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և անմիջապես հասանելի դառնում զանգվածային լրատվության միջոցին՝ ներբեռնման և տպագրության համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022թ. հունվարի 27-ի N 7-Ն որոշմամբ սահմանվել է ՀԼՄ-ների ներկայացուցիչների վկայականի ձևը, որում առկա է նշում «Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022թ. հունվարի 27-ի N 7-Ն որոշմամբ ամրագրված նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀԼՄ-ների ներկայացուցիչների վկայականների վրա առկա չէ նկար, ինչը հնարավորություն կտար նույնականացնել ներկայացած անձին: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն առաջարկել է մեկ այլ սարքով փորձել կարդալ «Tribut.am» ՀԼՄ ներկայացուցիչ Իլյուշա Մանուկյանը ներկայացրել է իր ՀԼՄ ներկայացուցչի վկայականի արագ արձագանքման ծածկագիրը (QR կոդ), ինչը հաջողվել է:

Թիվ 97 պայմանական համարակալումը կրող գրառմամբ ներկայացված հանգամանքի կապակցությամբ, որ ՀԼՄ ներկայացուցիչը չի ունեցել անձը հաստատող փաստաթուղթ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022թ. հունվարի 27-ի N 7-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն՝ ՀԼՄ-ի ներկայացուցչին տրվող վկայականը պարունակում է նաև արագ արձագանքման ծածկագիր (QR կոդ), որը հնարավորություն է տալիս հավաստիանալու տվյալ ՀԼՄ-ի տվյալ ներկայացուցչի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված լինելու հարցում, իսկ արագ արձագանքման ծածկագիրը (QR կոդ) ընթերցելու դեպքում այն

հնարավորություն է տալիս տեսնելու նաև ՀԼՄ-ի ներկայացուցչի նկարը, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն ենթակետում ներկայացված հանգամանքներում թիվ 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովն իրականացրել է ՀԼՄ-ի ներկայացուցչի նույնականացում և միայն դրանից հետո գրանցել տվյալները գրանցամատյանում:

ՀԼՄ ներկայցուցչի միայն վկայականով և առանց անձը հաստատող փաստաթղթի ներկայանալու վերաբերյալ տեղեկությունները թիվ 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովը հաղորդել է վերադաս ընտրական հանձնաժողովին քվեարկության օրն այն պահին, երբ նշված ՀԼՄ ներկայցուցիչը ներկայացել է տեղամասային կենտրոն: Վերադաս ընտրական հանձնաժողովն իրազեկվելով, որ թիվ 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի այն տեխնիկական հնարավորությունները, որոնց կիրառմամբ կարող է վկայականի արագ արձագանքման ծածկագիրը (QR կոդ) ընթերցելու միջոցով նույնականցնել անձին, ՀԼՄ ներկայացուցչի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը չխոչընդոտելու նպատակով թույլատրելի է համարեն նշված ՀԼՄ ներկայցուցչի մուտքը տեղամասային կենտրոն:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

7) ***Թիվ 69 և 72*** պայմանական համարակալումը կրող գրառման համաձայն՝ քվեատուփը փակված է եղել միայն այդ նպատակով տրամադրված ինքնասոսնձվող թղթերով, իսկ հատուկ կապիչներով կնքված չի եղել:

ՀՀ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ բացում է չհրկիզվող պահարանը, հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, ըստ անցկացված վիճակահանության՝ տրամադրում նրանց, հանում է կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը, ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը: Սույն ենթակետում ներկայացված գրառումներում առկա հանգամանքների գնահատմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 14/29 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգել է քվեատուփի դատարկ լինելը, փակել և կնքել է քվեատուփը, թեև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով՝ հատուկ կապիչներով այն չի կնքել: Նշվածի վերաբերյալ բարձրաձայնելուց հետո թիվ 14/29 տեղամասային ընտրակա հանձնաժողովի նախագահը քվեատուփը կնքել է նաև հատուկ կապիչներով՝ շտկելով նշված խնդիրը, ինչն արձանագրված է նաև գրանցամատյանում:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձնաժողովը գտնում է, որ սույն ենթակետում նշված գրառմամբ ներկայացված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

8) ***Թիվ 91*** պայմանական համարակալումը կրող գրառմամբ ներկայցված է, որ երկու ընտրող առանց գրանցվելու օգնության համար, միար ժամանակ գտնվել են քվեարկության խցիկում երկուական ծրարով: Թիվ 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի բանավոր պարզաբանմամբ նշված հանգամանքների իսկությունը հերքել է: Հարցին ի պատասխան, թե ինչու է այդ դեպքում գրանցամատյանում նշված հանգամանքների վերաբերյալ գրառում կատարվել, թիվ 14/38 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը նշեց, որ դիտորդը պնդում էր, որ նման բովանդակությամբ գրառում կատարվի, և դիտորդի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում իր գնահատականն արձանագրելու պահանջ ներկայացնելու իրավունքն ապահովելու նպատակով դիտորդի գնահատականն արձանագրվել է գրանցամատյանում: Գրառմամբ ներկայցված հանգամանքները հավաստող փաստեր սույն վարչական վարույթի շրջանակներում առկա չեն, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձնաժողովին ևս չի հաջողվել ձեռք բերել սույն ենթակետում նշված գրառմամբ ներկայացված հանգամանքները հավաստող փաստեր:

9) ***Թիվ 105*** պայմանական համարակալումը կրող գրառման համաձայն՝ քաղաքացի Ռոբերտ Հակոբյանը, որը օգնում էր տատիկին, երկրորդ անգամ իր անձնագիրը ներկայացրել է տեխնիական սարքավորումը սպասարկող մասնագետին, որը մուտք է արել քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը, ինչի արդյուքնում տեխնիկական սարքավորմամբ արձանագրվել է կրկնակի գրանցման փորձ: Թեև հենց այդ պահին պարզվել է, որ քաղաքացուն հաղորդած տեղեկությունն առ այն, որ որպես օգնող հադես գալու դեպքում նա պետք է գրանցվի, ընտրողը չի ընկալել որպես տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցվելու պահանջ, այլ ընկալել է որպես տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվելու պահանջ, դրա համար էլ կրկին մոտեցել է տեխնիական սարքավորումը սպասարկող մասնագետին, այնուամենայնիվ, թիվ 16/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ներս է հրավիրել ոստիկանության ծառայողներին, ովքեր ձեռնարկել են օրենքով սահմանված միջոցներ: Թիվ 16/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը նաև դեպքն արձանագրել է գրանցամատյանում: Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «6. Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշան, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:»: Այսպիսով, թեև գրանցամատյաններում առկա կրկնակի գրանցման փորձի վերաբերյալ գրառումներում առկա հանգամանքների շուրջ տեղում տրվել են պարզաբանումներ, որ դրանք եղել են շփոթմունքի կամ սխալմունքի արդյունքում, այդուհանդերձ նշված տեղամասային ընտրական հանձնաժողովում միջադեպի վերաբերյալ գնահատականն արձանագրվել է հանձնաժողովի գրանցամատյանում և ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության

սենյակ են հրավիրվել ոստիկանության ծառայողները, որոնք ձեռնարկել են օրենքով սահմանված միջոցներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն ենթակետում նշված գրառմամբ ներկայացված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 16.11.2025թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Նազարյան**